

ՀՀ սոցիալ-տնտեսական դրությունը և հասարակական-քաղաքական կյանքը

բ. Գաղթականության խնդիրը

Առաջին աշխարհամարտի տարիներին երիտթուրքերի իրագործած եղեռնից մազապուրծ և բնավեր բազմահազար արևմտահայերի մի մասը, խույս տալով կոտորածներից, անցավ Արևելյան Հայաստան, Վրաստան ու Հյուսիսային Կովկաս:

1918 թ. սկզբներին թուրքական զորքերի՝ դեպի Արևելյան Հայաստան ու Անգրկովկաս ներխուժելու հետևանքով արևելահայ մի շարք շրջանների՝ Կարսի, Ալեքսանդրապոլի, Սուրմալուի, Ախալքալաքի, Եարուր-Նախիջևանի, Ղարաբաղիսայի, էջմիածնի, Ղամաբուլուի և այլնի, Հայ բնակչության հիմնական զանգվածները ևս հարկադրված դիմեցին գաղթի: Փաստորեն առաջացել էր արևմտահայ ու արևելահայ գաղթականություն: 1918 թ. մայիսի կեսերին Արևելյան Հայաստանում կուտակվել էր 475 հազար գաղթական: Նրանցից 260 հազարը արևմտահայեր էին, 135 հազարը՝ Կարսի մարզից և այլ վայրերից¹⁴⁰: Թուրքերի՝ Շիրակ և Արարատյան դաշտ ներխուժելուց հետո գաղթականների թվաքանակն ավելի մեծացավ: Գաղթականների առանձին խմբեր անցան Թիֆլիս և Հյուսիսային Կովկաս: Ս. Վրացյանի բերած տվյալներով 1918 թ. ամռանը Հայաստանի Հանրապետության փոքր տարածքի վրա կուտակվել էր շուրջ 450 հազար գաղթական¹⁴¹: Ստացվել էր այնպես, որ Հանրապետության մոտ 1 միլիոն բնակչության շուրջ կեսը գաղթական էր:

Նորահռչակ Հանրապետության կառավարությունը կոչված էր սատարելու աստանդական գաղթականությանը թե՛ Հանրապետության տարածքում և թե՛ նրանից դուրս: Դժնդակ պայմաններում հայտնված գաղթականության խնդրով էին զբաղվում խորհր-

¹⁴⁰ Տե՛ս Ավետիսյան Յ., Հայոց ազգային միասնության հարթանակը, էջ 76:

¹⁴¹ Տե՛ս Վրացյան Ա., Հայաստանի Հանրապետություն, էջ 191: Նույնի Կեանքի ուղիներով, հ. 5, Պէլլուր, 1966, էջ 14:

գրաբեր գաղթականության Հարցերի մշտական Հանձնաժողովը և կառավարության խնամատարության ու ներքին գործերի նախարարության կողմից:

Հայաստանի խորհուրդը բազմիցս լսել էր գաղթականության Հարցը և ընդգծել սեկ առանցիկ աղին օրենքներ ու օրենսդրական ակտեր՝ գաղթականության առաջին օրենքը, նյախակն օժանդակության, որբերի խնամքի, քրազվածության, ներգաղթի և այլ խնդիրների վերաբերյալ: 1918 թ. սեպտեմբերի 28-ին խորհուրդի ընդունեց օրենք «Կարի ունեցող գաղթականների խնամատարության մասին»: Համաձայն այդ օրենքի՝ աշխատանքային գաղթականներին տրվում էր աշխատանք, իսկ անաշխատունակներին՝ նպաստ: Բարի դասեր, պետական ազատ, լրվում ու աներ հողերի Հաշվին յուրաքանչյուր գաղթական ընտանիքի տրվում էր Հող աշխատող ձեռքի Թվաբանակին Համաստատանքով: Մեկ այլ օրենքով նախատեսվում էր գաղթական կանանց Համար բացել պետական ջուր-Հանձնացներ, որտեղ պետք է տարգելվեին Համագաղթական բամբակահատի մ ու սարքավորումներով: Գործի զբոլիցին 1500 դրագաճ և 20 Հազար հայտարակ¹⁴²:

Արևմտահայ գաղթականությունը Հանրապետության ազգաբնակչության սոցիալապես ամենանապաստված մասն էր: 1918 թ. Հոկտեմբերի սկզբին պաշտոնապես սրժանագրված 330 Հազար գաղթականներըց չուսող օգնության կարիք ունեին 10 Հազար որբեր, 25 Հազար անհարևներ, 1000 Համաճարեղներ (անկախորդ), 26,5 Հազար մասնակի օգնության կարիք ունեցողներ: Կառավարության կողմից նախատեսվում էր 10 Հազար որբ ծախսերը Հոգալու: Համար ամսական պահանջվում էր 1,5 միլիոն ուրլի: Գաղթականի դրամական նպաստ օրական կազմում էր 60 կոպեկ (մեկ շնչի Հաշվով): Գաղթականներին սոցիալական պաշտպանություն Համար յուրաքանչյուր շնչին օրական տրվում էր կեն ֆունտ ալյուր՝ որպես նվազագույնը չափաբաժին: 1918 թ. Հոկտեմբերի 1-ից մինչև 1919 թ. Հունվարի 1-ը գաղթականությանը ցույց տրվելիք օգնության ծախսերը, ըստ կառավարության կողմից նախահաշվի, կազմել էին 12,7 միլիոն ուրլի¹⁴³:

Թշուղ գաղթականությանը առաքելով և անհրաժեշտ օգնություն ցույց առալու Համար 1918 թ. երկրորդ կեսին Հայաստանի Հանրապետության առաքելուք բաժնակի էր գաղթականական 10 շրջաններ: Խնամատարության նախարարության 1918 թ. դեկտեմբերի 6-ի թիվ 1 տեղեկագրի Համաձայն՝ Հանրապետության տարածքում առկա գաղթականության Թվաբանակը կազմում էր մոտ 350 Հազար մարդ, այդ թվում՝ երևանում (արվարձաններով) 75 Հազար, Աշտարակի շրջանում՝ 30 Հազար, Ախտա-Երևանիկայում՝ 22 Հազար, Բաշ Գյուանիում՝ 15 Հազար, Նոր Բայազետում՝ 38 Հազար, Դարպապալում՝ 36 Հազար, Բաշ Ապարանում՝ 35 Հազար, Էջմիածնում՝ 70 Հազար, Դարպարիկայում՝ 16 Հազար և Գիլիմանում՝ 13 Հազար մարդ¹⁴⁴: 1918 թ. երկրորդ կեսին գաղթականությունը կազմել է Հայաստանի Հանրապետության ողջ ազգաբնակչության չուրժ 45 տոկոսը: Ընդ որում՝ Հայաստանում և Կովկասում Հայ գաղթականության Թվաբանակը վերաբերյալ կազմ տվյալները Համայն տարբերվում են, որի Հիմնական պատճառը նրանց անընդհատ տեղադրվածներն են:

1918 թ. վերջերից, երբ աշխարհամարտում պարտված Թուրքերը Հնո բազմեցին Անդրկովկասի ու Արևելյան Հայաստանից, արևելահայ փախսականներն իրենց նախկին բնակության վայրերը վերադառնալու: Հնարավորություն ստացան: Սակայն միա-Հասած սովի, ստանձաններին, Համաճարակների Հնոաներով վից ամակ ընթացում

Հանրապետությունում մահացավ մոտ 180 Հազար մարդ՝ Հիմնականում գաղթականներ: 1918 թ. փետրվարի դրությամբ Հայաստանի Հանրապետության մահճաններում տեղա-կայված գաղթականների ընդհանուր Թվաբանակը կազմել է 263 393 մարդ¹⁴⁵: Գաղթա-կանության Թվաբանակի վերաբերյալ 1918 թ. դեկտեմբերի (350 Հազար մարդ) և 1919 թ. փետրվարի (263 393 մարդ) տվյալների պարզ Համեմատությունը ցույց է տալիս, որ երկու-երեք ամսվա ընթացքում նրանց Թվաբանակը նվազել էր չուրժ 90 Հազարով:

Արդեն 1919 թ. կեսերից ինչպես ամբողջ Հանրապետության սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքում, այնպես էլ գաղթականության շրջանում կայունացման որոշ միտումներ նկատվեցին. մի կողմից՝ ամերիկյան ալյուրը մեղմեց սովը, մյուս կողմից՝ ընդարձակվեցին Հայաստանի Հանրապետության սահմանները, որտեղ գաղթական բնակչության վերաբաշխման ու բնակեցման աղիկ մեծ Հնարավորություն ստեղծեցին: Արևել-հայ փախսականները վերադարձան իրենց Հայրենի բնակավայրերը: Միայն Կարս շրջանում 50 Հազար փախսականներն ենթադրվել կազմակերպվում և իրենց նախկին բնակավայրերում Հաստատվելու Համար 1919 թ. մայիսին կառավարությունը Հտա-կացրեց 36,2 միլիոն ուրլի փարկ: Տասնյակ Հազարավոր գաղթաբյուցեցներ, վերջերին, սուբսիդիցներ ու սարգարապատցիներ վերադարձան իրենց Հայրենի բնակավայրերը: Կարգ ուստանովից, որ նախ բնակեցվում են տեղացի, որից Հնոտ, ըստ Տնարավորու-թյան, ոչ անընդհատ փախսականները: Առավել զգալուրբնալու էր բնակության Հաստա-տում արևմտահայ գաղթականը, որն այնքան էլ չէր Համակերպվում պայմաններին: Նա գտնվում էր մի տեսակ սպառնալից իմաստում՝ անկախորդ Հայկական Հարցը զրական լուծում և վերադարձ դեպի Հայրենի օրրան: Այդուհանդերձ, դժալով գաղթականի կար-գավիճակ ունեցողների բացարձակ Թվաբանակը պակասում էր:

Հանրապետության իշխանություններին առանձնահատուկ Հոգստություն առարկա էր որբերի խնդրը: 1918 թ. Հոկտեմբերի 11-ի օրենքով գաղթական որբերի խնամքի և դաս-տարության կարգը պետությունը վերցրել էր իր վրա: Հանրային խնամատարության նախարարության Համակարգում բազմից էր Հտուղի որբանոցային բաժին: 1918 թ. դեկ-տեմբերին խնամատարության նախարար Ա. Խտալյանը կազմել էր գաղթականության, այդ թվում՝ որբերի խնդրին վերաբերող գործունեության քննիչ: Նույն նախարարու-թյան տվյալներով՝ Հայաստանում կային մոտ 40 Հազար որբեր, որտեղից Հաշվառման և պետական բարեօրոժական կազմակերպությունների խնամքի տակ էին վերցնել ընդամեն-ը 15 612-ը: Հանրապետությունում գործում էին չուրժ Տինգ ստանյակի Հասնող որբա-նոցներ, որտեղից ամենամեծը Արևիստաղադրյունն էր՝ 1 219 որբերով¹⁴⁶:

Ամերիկյան Հնո կերտ պայմանագրով Հայաստանի կառավարությունը նրան Հանձ-նեց Հայաստանում գտնվող որբ երեխաների մեծ մասի խնամատարությունը: 1919 թ. աշնանը միայն Հանրապետության որբանոցներում սպաստանած 23 110 երեխաների ճեղքվ մեծամասնության կարբերները Հոգում էր Ամերիկոն: Իսկ 1920 թ. օգոստոսի 1-ի որբանոցները սնունդ էր ստանում 50 Հազար Հայ երեխա, Հանրապետությունում օգնու-թյան կարգով բաժանվել էր 108 Հազար սնունդ միջնարպաշար, իսկ ընդհանուր ծախսերի գումարը կազմում էր 21 միլիոն ԱՄՆ դոլար¹⁴⁷:

1919 թ. մայիսի 1-ից խնամատարության նախարարության ենթակայության որբա-նոցներն իրենց աղիկի բան 14 Հազար որբերով ու կահավորանքով Հանձնվեցին Ամեր-

¹⁴² Տես Հայաստանի Հանրապետության պաշտանելու օրենքները (1918-1920 թթ.), վավ. 12, էջ 6, վավ. 20, էջ 9: ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, 4, 86, 6-8:

¹⁴³ Տես Հայաստանի Հանրապետության պաշտանելու օրենքները (1918-1920 թթ.), վավ. 22, էջ 11-12:

¹⁴⁴ Տես ՀԱԱ, ֆ. 199, գ. 1, 4, 22, ք. 4: Դոսանը, 14 Յունեբերի, 1918:

¹⁴⁵ Տես ՀԱԱ, ֆ. 243, գ. 1, 4, 9, ք. 23, 33:

¹⁴⁶ Տես Ուլյս տեղում, ֆ. 199, գ. 1, 4, 22, ք. 8, 84:

¹⁴⁷ Տես Ավետիսյան Ս., Սերժովար Արևելքի ամերիկյան մասնատմանուց կոմիտեի գործունեու-թյունը Հայաստանում 1918-1930 թթ., Երևան, 2009, էջ 79, 97:

կան խնամակալություններ¹⁴⁸։ Արքիմեդ էր վրա գրեցրել բոլոր որդեկանցիների ծախարակ։ Միտամանակ Զանգեր գործարարների նոր որդեկանքի բացելու ուղղությամբ։

1919 թ. երկրորդ կեսից որբերի գաղթականության և նրանց աշխատանքային հմուտությունների սովորեցնելու նպատակով խնամատարությունների և աշխատանքի նախարարություններին միջնույժ մրադրվում է 2250 որբերի համար բացել հյուանդանային, կոլեկտիվային, կարուճակի, ձկնաբլուրի, գուլպայագործի և շուշուկային 35 արհեստանոց¹⁴⁹։ 1919 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Հայգլխով որդեկանք նպատակների համար բացվում է ուրբ 65 միլիոն ուսուրի վարկ¹⁵⁰։

Աղբարհույնության բազարական անվտանգություն և սոցիալական պաշտպանությունն առանկախոց առանկա անորդ էր Հայաստանի սահմաններից դուրս գտնվող Հայ գաղթականության միջոցով։ Գաղթականության ստվար գունդակները կային Արաստանում, Հյուսիսային Կովկասում, Բաքուում, Իրանում, Հյուսիսային Միջագետքում և այլուր։ Հանրապետության կառավարությունը էր սուղ միջոցներից օգտնվելու րամիկ հանց նաև նրանց համար։ Արաստանի սահմաններում գտնվող Հայ տարազգիներին համար 1918 թ. նոյեմբերին Արհեստանոց ազգային խորհրդին տրամադրվեց 5 միլիոն ուսուրի¹⁵¹, դեկտեմբեր ամսին Իրանում գտնվողների համար Հատկացվեց 300 Հազար ուսուրի¹⁵²։ Թավրիզի Հայ գաղթականների համար 1919 թ. աշնան Հատկացվեց 1 միլիոն ուսուրի։ Միջապետի ու Հատկապես Բաքուի Հայ գաղթականների համար Հայաստանի կառավարությունը խնամատարություն նախարարության անունով բացեց 5 միլիոն ուսուրի վարկ¹⁵³։

Հայ աղբարհույնության համար առանկա իրազեակող միակ ստեղծվեց Աղբարհույն Հանրապետության սահմաններում։ Աղբարհույն իշխանությունների վարած Հայաստանում ու Զարգարական բազարականության հնամենեցի մի բան տասնյակ Հազարի հանոց Հայ բնակիչներ սկսեցին գաղթել աղբարհույնություններով։ Նրանց զգալի մասը Նուխի, Արեշի, Շամախի, Գյոքչայի և այլ գավառներից Հայաստանի կառավարության և Հայրենական զանակ միությունների քննադատ Զանգերի չնորհվել ներգաղթել Հայաստան։ 1919 թ. ամռան Աղբարհույնից Հայաստան ներգաղթեց 16 431 մարդ, որոնց փոխադրեցան և ապրուստի միջոցները Հայաստանի կառավարությունը Հատկացրեց 9,7 միլիոն ուսուրի¹⁵⁴։ Հայաստանի Հանրապետության սահմանների ընդարձակման շնորհիվ անպատասան գաղթականությունը ստեղծվում էր լրջալ ևս. անպայման դուրսերում և այլ բնակավայրերում։

Արևմտահայ տարազգիների զգալի մասը չէր կարողանում համակերպվել Հանրապետության տարածքում կայուն բնակություն հաստատելուն և ներգրուտ սպասում էր Հայկական Տարբի արդարացի լուծմանը։ 1919 թ. փետրվարի 6-ից 13-ը Երևանում գումարով արևմտահայերի 2-րդ համագումարը, որի 55 պատգամավորներն ընտրվել էին Հանրապետության տարածքում առկա ավելի քան 200 Հազար գաղթականների կողմից։ Հանրապետության ընդունեց բազարական նշանակության ունեցող կարևորագույն բանանակ ազատ և միացվել Հայաստան ստեղծելու մասին, այսինքն խնդր էր դրվում արևելահայ և արևմտահայ Հայտավանքի միավորմանը ստեղծել մեկ միասնական պետություն՝ Միացյալ և Անկախ Հայաստան¹⁵⁵։

Գաղթականության և առհասարակ գաղթականության խնդրից Համապարսիկ բնույթով անկեղ 1919 թ. փետրվար-ապրիլին Փարիզում հրավիրված Հայ ազգային համագումարում։

1920 թ. գարնանը, երբ մեծ տերությունները փաստացի ճանաչել էին Հայաստանի Հանրապետությունը, և արդեն մշակվել էր Թուրքիայի հետ ազգագ Հայտության արևմտահայերի նախադրել, ավելի գործնական հողի վրա դրվեց աշխարհագրություն աշխատանքի գաղթականությանը զեպի Արևմտյան Հայաստան ներգաղթելու խնդիրը։ Հայաստանի բազարական ղեկավարությունը բավ գիտակցում էր, որ ստանց գանգաղմային ներգաղթի միացյալ Հայաստանի գաղափարը կարող էր էլ չէր դառնալ։

Ներգաղթի խնդիրներով զբաղվող արևմտահայ գործիչ Ա. Մաքսապետյանի մտայնությամբ Աղբարհույնությունում կար 222 Հազար գաղթական, Իրանում՝ 20 Հազար, Բաղդադ-Բաքուերում՝ 15 Հազար, Մոսկուում՝ 10 Հազար, Դեր Զբուում՝ 5 Հազար, Հայկասում՝ 80 Հազար, Եգիպտոսում՝ 10 Հազար գաղթական և այլու։ Տեղիություններ կան, որ 1919 թ. ամռանը արևմտահայ գաղթաներում և Կիլիկիայում գտնվող են 360 Հազար Հայեր։ Մրազրվում էր նաև Հյուսիսային Կովկասում գտնվող Հարյուր Հազար լինի Հայ գաղթականների թվով կամ Արաստանից փոխադրել Հայրենիք։ Բաքուի, Ինֆիլիսի և Գանձակից սպասվում էր մոտ 80 Հազար գաղթականների հոսք զեպի Հայաստանի Հանրապետություն, որոնց ընդունման ու տեղափոխման համար ձեռնարկվում էին միջոցառումներ¹⁵⁶։

1920 թ. մարտ ամսին հիմնվել էր ներգաղթի հանձնաժողով, որը պետք է կազմակերպեր արևմտահայ տարազգիների վերադարձը զեպի տուն։ Հայաստանի կառավարությունը ներգաղթի գործը համարում էր պետական կարևորություն խնդիր։ Ասկային Հայաստանի իշխանությունները միաժամանակ զեռակցում էին, որ գործը կազմվում էր մշտական վտանգների ու մեծ ծախսերի հետ։ Նախնական մարզավայրեր էին արվում, որ միայն Կովկասից զեպի Արևմտյան Հայաստան 300 Հազար վերաբնակեցնելու համար կպահանջվեր 3 միլիարդ ուսուրի։

Իսկ մինչ այդ Հայաստանի Հանրապետությունում աշխատանք էր կատարվում գաղթականների կայանի, աշխատանքի ու կենցաղի համար զեպի թե նաև տանելի պայմանների ստեղծելու ուղղությամբ։

Ինչպի Արևմտյան Հայաստան արևմտահայության ներգաղթի խնդրով Զանադորուն զբաղվում էին Հայաստանի կառավարությունը, Փարիզում գտնվող Հայկական կառավարականությունները, արևմտահայ դործարար մարմինները, Հայ բազարական կուսակցությունները։ Հայաստանի կառավարությունը պաշտոնապես էր բանի տասնյակ աղետան զեռում էր Հզելի գաղանկից տերություններին արևմտահայերի ներգաղթի վերաբերյալ։

Տարբեր երկրներում պետական և հասարակական մակարդակներով կազմակերպվում էին բարեգործական հանգանակություններ։ ԱՄՆ-ում Հանգանակվել էր 20 միլիոն դոլարի աղբարհու, որը պետք է բաշխվեր Արևմտյան Հայաստան ներգաղթող ժողովրդին։ Անգլիայում նվիրատվությունների ձևով հազարվել էր 40 Հազար փոշուտ ստեղծվեց։ Հանգանակությունների կազմակերպման գործում զգալի դեր են խաղացել Է. Բաղդուստյանը, Անդրանիկը, Գ. Փաստարճյանը, Ա. Էնֆիլայանը և ուրիշներ։ Միայն Անգլիայից նախձեռնություններ կազմակերպված «Փրկության հանգանակության գումարը» կազմեց 532 Հազար ԱՄՆ դոլարից ավելի։

¹⁴⁸ Տես ՅԱԱ, ֆ. 117, գ. 1, գ. 1880, p. 3:

¹⁴⁹ Տես Սույն տեղում, ֆ. 202, գ. 1, գ. 333, p. 41-42:

¹⁵⁰ Տես Հայաստանի Հանրապետության պալատների օրենքները (1918-1920), վավ. 30, էջ 16:

¹⁵¹ Տես Սույն տեղում, էջ 20:

¹⁵² Տես ՅԱԱ, ֆ. 198, գ. 1, գ. 79, p. 2-3:

¹⁵³ Տես Սույն տեղում, ֆ. 205, գ. 1, գ. 575, p. 1, ֆ. 245, գ. 1, գ. 7, p. 24:

¹⁵⁴ Տես Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.)..., էջ 296-297: Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (լրագրական պատմություն)...., վավ. 69, էջ 88:

¹⁵⁵ Տես ՅԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 43, p. 92:

Սակայն 1920 թ. կեսերից միջազգային իրադրությունը Հայաստանի համար այնպես անհաջող դասավորվեց, որ ոչ միայն ներգաղթի խնդիրը փակվեց, այլև բուն արևմտահայ նահանգներում և Կիլիկիայում ապաստանած հայերը հետագայում հարկադրված էին մասամբ արտագաղթել իրենց հայրենիքից կամ էլ աստիճանաբար կրոնափոխվել և ուժանալ:

Աղբյուրը՝ «Հայոց պատմություն. նորագույն ժամանակաշրջան (1918-1945)», հ. IV, գիրք I, խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2010, էջ 61-66: